

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ազատական տնտեսակարգին անցումը ենթադրում է նաև վիճակագրության ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից մշակված և վերջիններիս կողմից կիրառվող վիճակագրական համակարգերի ներդրում, որոնցից հիմնարարը՝ միջազգային կազմակերպությունների կողմից մշակված «Ազգային հաշիվների համակարգ 1993»¹ ստանդարտն է, որի ամբողջական ներդրման աշխատանքները շարունակվում են դեռևս 1990-ական թվականների առաջին կեսից: Համաձայն վերը նշված համակարգի, ազգային հաշիվների հաշվարկները տարվում են ըստ հետևյալ հինգ ինստիտուցիոնալ հատվածների՝ ոչ ֆինանսական ձեռնարկությունների (կորպորացիաների), ֆինանսական հիմնարկների, պետական կառավարման մարմինների, տնային տնտեսությունների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում նշված հատվածներից տեղեկատվական աղբյուրների կատարելագործման առումով առավել մեծ կարիք ունի տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) հանրապետությունում գրանցված ոչ առևտրային կազմակերպությունների թողարկման ծավալների գնահատման, ինչպես նաև Ազգային հաշիվների համակարգում (մասնավորապես՝ համախառն ներքին արդյունքի կազմում) տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածի ամփոփ ցուցանիշների հաշվարկման և դրա մեթոդաբանության կատարելագործման նկատառումներով պայմանավորված, TACIS ծրագրի «Վիճակագրություն 4» պայմանագրի «Ազգային հաշիվների համակարգ» նախագծի շրջանակում 2002թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացրել է հանրապետությունում գրանցված ոչ առևտրային կազմակերպությունների ընտրանքային հետազոտություն՝ գործունեության ֆինանսական արդյունքների մասով:

Հետազոտությունն իրականացվել է «Ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական գործունեության հետազոտության հարցաթերթ» պետական վիճակագրական դիտարկման փաստաթղթի (հարցաթերթի) միջոցով:

Փաստաթուղթը մշակելիս հաշվի է առնվել Ռուսաստանի Դաշնության վիճակագրության պետական կոմիտեի կողմից նախկինում իրականացված

¹ Ազգային հաշիվների համակարգ 1993թ. Եվրոստատ, Միջազգային արժույթային հիմնադրամ, Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն, Միացյալ ազգերի կազմակերպություն, Համաշխարհային բանկ (Բրյուսել/Լյուքսեմբուրգ, Նյու-Յորք, Փարիզ, Վաշինգտոն, 1993թ.):

համանման հետազոտության համար կազմված հարցաթերթերում ներառված ցուցանիշները, որոնք համապատասխան փոփոխություններից հետո համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետությունում իրականացվելիք հետազոտության նպատակներին և խնդիրներին, ինչպես նաև հանրապետությունում գործող հաշվապահական հաշվառման նոր կարգում կիրառվող մոտեցումներին և սկզբունքներին:

Այնուհետև, լրամշակված հարցաթերթը ենթարկվել է մեթոդաբանական փորձաքննության, ինչպես նաև համաձայնեցվել է Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից առաջարկված Հունգարիայի վիճակագրական ծառայության համապատասխան փորձագետների հետ:

Ընտրանքային հետազոտության մեջ ընդգրկվել են հանրապետության մարզերի և Երևան քաղաքի թվով 805 ոչ առևտրային կազմակերպություններ:

Սույն հետազոտության իրականացման համար կիրառվել են վիճակագրական այնպիսի ստանդարտ գործիքներ, ինչպիսիք են դասակարգիչները, ընտրանքի կազմակերպումը, ծրագրային ապահովումը և այլն: